

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ФИЗИОЛОГИИ

ВОПРОСЫ ВЫСШЕЙ НЕРВНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

Выпуск I

1952

Գ. Թ. ԱԴՈՒՆՅԱ, Վ. Բ. ԵՂՅԱՆ ԵՎ Ա. Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆԵՐՔԻՆ ԱՐԳԵԼԱԿՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԻԿԱՄՆԵՐԻ
ՖԻԼՏՐԱՑԻՈՆ ԵՎ ՌԵԱԲՍՈՐԲՑԻՈՆ ՖՈՒՆԿՑԻԱՅԻ ՎՐԱ

Կենդանի օրգանիզմին յուրահատուկ են բազմաթիվ կենսական պրոցեսներ, որոնց մեջ առանձին տեղ է գրավում նյութերի փոխանակությունը. Յուրաքանչյուր ֆիզիոլոգիական երևույթի համար ունի նյութերի փոխանակության այս կամ այն ընթացքը. Պավլովյան ֆիզիոլոգիան իր սինթետիկ մեթոդով հիմք դրեց ամբողջական օրգանիզմում տեղի ունեցող ֆիզիոլոգիական երևույթների բնույթի բացահայտմանը, ախտաբանական փոփոխությունների պատճառները պարզելուն, այդ փոփոխված երևույթների նորմալացման ուղիները մշակելուն ու փնտրելուն, ֆիզիալոգիական պրոցեսի ընթացքին տիրապետելուն և զեկավարելուն, այսինքն՝ օրգանիզմի վրա նպաստակիր կերպով ազդելու աշխատանքին:

Կենդանի օրգանիզմը բաղկացած է բազմաթիվ, սակայն իրենց գունկցիաներով խիստ տարրեր օրգաններից, որոնցից յուրաքանչյուրի մեջ միաժամանակ ընթանում են մի շարք տարրեր անսակի պրոցեսներ: Այս բազմաթիսի պրոցեսները միաժամանակ ընթանալով մեկը մյուսին չեն խանդարում, ավելին՝ նրանք կորելացվում և համաձայնեցվում են իրար հետ, լրացնում մեկը մյուսին և նպաստում օրգանիզմի նորմալ գոյությանը:

Չնայած իր բազմապիսի ֆունկցիաներին, կենդանի օրգանիզմը մի ամերողջություն է ներկայացնում իրեն շրջապատող արտաքին աշխարհի հետ և հարմարվելով այդ վերջինի անընդհատ փոփոխություններին, ինքն էլ փոփոխվում է այդ պրոցեսում:

Ինչպես ցույց տվեց Ի. Պ. Պավլովը, օրգանիզմի արտաքին միջավայրին հարմարվելու երևույթի հիմքում ընկած է հատկապես նրա պայմանական սեփեկառ գործունեությունը, որը բարձր կարգի կենդանիների մոտ իրականացվում է գլխուղեղի կեղեկի միջոցով:

Կենարունական ներվային սիստեմը և առանձնապես գլխուղեղի կեղեկ վերին աստիճանի զգայուն են գեղի ներքին ու արտաքին միջավայրի փոփոխությունները, որոնք ազդելով գլխուղեղի կեղեկի վրա, համապատասխան փոփոխություններ են առաջացնում կենդանի օրգանիզմի մեջ:

Ուստի մեծ ֆիզիոլոգ Ի. Պ. Պավլովը իր բազմամյա աշխատանքի փորձով ցույց տվեց, որ գլխուղեղի կեղեկը զեկավարում և ուղղություն է տալիս ներքին և արտաքին միջավայրի ազդեցության տակ օրգանիզմում տեղի ունեցող բռնոր երևույթներին:

Գլխուղեղի կեղեկի գործունեության հիմքում ընկած է երկու հիմնա-

կան ներզային պրոցես՝ գրդումը և արգելակումը: Վերջինս (արգելակումը) իր ներթին նույնպես երկու բնույթի է՝ արտաքին արգելակում և ներքին արգելակում: Բարձրագույն ներզային գործունեության համար կարենոր նշանակություն ունի ներքին արգելակումը:

Ինչպես ցույց տվեց ի. Պ. Պավլովը, ներքին արգելակման պրոցեսը նույնքան կարենոր է կենդանի օրգանիզմի համար, որքան և գրդումը: Արգելակումը միշտ ուղեկցում է գրդման պրոցեսին և միահյուսվելով նրա հետ՝ պայմանավորում օրգանիզմի նորմալ գործությունը, հատկապես նրա ավելի կատարյալ հարմարվելությունը արտաքին աշխարհի փոփոխություններին:

Ի. Պ. Պավլովը հայտնաբերեց պայմանական, ներքին արգելակման երեսույթը, որը ձեռք բերովի հատկություն է և ունի հսկայական նշանակություն իրենց բիոլոգիական արժեքը կորցրած պայմանական ռեֆլեքսների մարման և վերացման համար: Պայմանական, ներքին արգելակման հայտնաբերումը գիտության մեջ խոշոր գյուտ հանդիսացավ: Եթե այդ պրոցեսը չլիներ, օրգանիզմի ռեֆլեքտոր գործունեության մեջ կառաջանար քառոսային վիճակը, որը կարտահայտվեր մի շարք կարենոր կենսական պրոցեսների խախտումով, իսկ ներզային սիստեմը, հատկապես նրա բարձրագույն հատվածները, խիստ կծանրաբեռնվեին և այդ փաստակար կլինիկ գլխուղեղի առանց այն էլ նուրբ և զգայուն բջիջների համար:

Մյուս կողմից, գլխուղեղի կեղեի բջիջների երկարատև գրդումը նրանց հոգնեցնում և հյուծում է: Այդ բերում է գրդման և արգելակման պրոցեսների բարանսի խախտմանը, որի հետևանքով փոխվում է կենդանի օրգանիզմի վարքը, խանգարվում է գլխուղեղի կեղեի ազդանշանային գործունեությունն արտաքին և ներքին ազգակների հանդեպ: Գլխուղեղի կեղեի երկարատև գերդրման հետևանքով առաջանում է ներող, որի բուժումը երրենին բավական լուրջ և գելվար խնդիր է հանդիսանում:

Ի. Պ. Պավլովը ցույց տվեց, որ ներքին արգելակումը ակախիլ պրոցես է: Նա ոչ միայն կանխում է ախտաբանական երեսույթների առաջացումն ու զարգացումը, այլև բուժիչ ազդեցություն է ունենում այն դեսպերում, երբ արգեն առկա են այդ երեսույթները: Ի. Պ. Պավլովը էքսպերիմենտալ ձեռվ շների վրա ստանում էր ներող և բուժում այն արգելակման միջոցով: Այդ մեթոդին էր դիմում նա և մի շարք հոգեկան խանգարումների բուժման ժամանակ:

Ներկայումս, երբ պավլովյան ուսմունքը կիրառվում է կլինիկական պրակտիկայում, բուժիչ արգելակումը առանձին նշանակություն է ստանում:

Արգելակման երեսույթը զարգանում է ուղեղի կեղեի ակտիվ գործունեության շնորհիվ: Վերը մենք նշել ենք, որ ուղեղի կեղեն ազգում և ուղղություն է տալիս օրգանիզմում կատարվող բոլոր պրոցեսներին, ազդում է բոլոր օրգանների գործունեության վրա: Կ. Մ. Բիկովը, Մ. Ս. Ռւսիկիչը և ուրիշները զարդարեցնելով Պավլովի Փիզիոլոգիական ուսմունքը, ցույց տվին այն փոխազարձ կապը, որ գյություն ունի գլխուղեղի կեղեի և ներքին օրգանների գործունեության միջև: Ներքին օրգանների աշխատանքի փոփոխումը կապված է ուղեղի կեղեի փունկցիոնալ վիճակի հետ: Ուղեղի կեղեւմ գրդման կամ արգելակման երեսույթների գերալշուման գեպքում համապատասխան ձեռվ փոփոխումը է և նրանց գործունեությունը:

Նյութերի փոփոխության հետևանքով, կենդանի օրգանիզմի բոլոր հյուսվածքներում առաջանում են ավելորդ և մասսակար նյութեր, որոնք օրգանիզմի վրա վնասակար ազդեցություն են ունենում: Երիկամը այն օրգանն է, որն իր վրա է վերցնում այդ վնասակար նյութերի հետացումն օրգանիզմից, կանխում օրգանիզմի ինքնաթունավորումը և պայմանավորում նրա նորմալ աշխատանքը: Այս ախատկետից հետաքրքիր է պարզել այն կապը, որը գոյություն ունի գլխուղեղի կեղեր և երիկամի ֆունկցիայի միջև. Այս կապակցությամբ բավական աշխատանք են կատարել Օքելին, Բիկովը ու Նրանց աշխատակիցները:

Օքելին և նրա աշխատակիցները ինտակտ կենդանու մոտ ցավային գրգիսից ստացել են սեֆլեկտոր անուրիա (1): Այս երևույթը ստացվել է նաև ներվազրկված երիկամի վրա, ողնուղեղի բարձր (կրծքային առաջին սեփմենտի սահմանում) և երկու կողմից թափառող ներվերի կամ ընդերային և երիկամի դրունքով մանող ներվերի հատման ժամանակ (2, 3): Յավի ազդեցության տակ ինտակտ երիկամի վրա ողնուղեկտոր անուրիա է ստացվում նաև այն գեղքում, երբ հետացվում է կենդանու հիպոֆիզը (4): Այսակից երևում է, որ երիկամի գործունեության վրա ազդում են ինչպես ներվային, այնպես էլ հումորալ ճանապարհներով եկող տղթակները:

Անուրիա ստացվել է նաև պայմանական սեֆլեկտոր եղանակով: Այս ճանդամանքը ցույց է տալիս, որ գլխուղեղի կեղերը նույնպես ազդեցություն ունի երիկամի ֆունկցիայի վրա:

Այս կապակցությամբ առաջին ավյաները պատկանում են ոռւս կլինիցիստներ Բելխաերին, Կարպինսկուն և նրանց աշխատակիցներին: Նրանք ցույց տվին, որ հնարավոր է պայմանական սեֆլեկտոր ձևով բարձրացնել կենդանու դիուրեզը, իբրև անպայմանական գրգիս օգտագործելով հեղուկների ընդունումը թեր. Պատոնսվը ցույց տվեց, որ ջուր խմելու հիպոնոտիկ ներշնչումով կարելի է բարձրացնել դիուրեզը:

Ակադեմիկոս Օքելու լաբորատորիայում ցույց է տրված, որ կենդանու մոտ պայմանական սեֆլեկտոր ճանապարհով կարելի է ստանալ անուրիա, իբրև անպայմանական գրգիս օգտագործելով կենդանու ոտքը էլեկտրական հոսանքով գրգուելը (5): Ակադ. Բիկովի լաբորատորիայում ցույց է տրված, որ պայմանական սեֆլեկտոր ճանապարհով կարելի է բարձրացնել կենդանու գիտուրեզը, որպես անպայմանական գրգիս օգտագործելով ուղիղ աղիքի մեջ ջուր լցնելը (6, 7). Կենդանուն պիտուիտարին սըսկելու միջոցով Բորոդավիկինան Բիկովի լաբորատորիայում ստացել է անուրիա: Այս ֆունի վրա հետագայում նա անուրիա է ստացել միայն ֆիզիոլոգիական լաւծույթ սրսկելու միջոցավ (8): Այս երևույթի մանրամասն ուսումնասիրությունը ցույց է տվել, որ հիպոֆիզի հետին բիլթը կարենոր ազդեցություն ունի երիկամի ֆունկցիայի վրա, որ նրա արտադրած անտիդիուրետիկ հորմոնը մեծ նշանակություն ունի սեֆլեկտոր և պայմանական-սեֆլեկտոր անուրիայի առաջացման մեխանիզմում:

Օքելու և Բիկովի լաբորատորիաներում ցույց է տրված, որ կարելի է պայմանական սեֆլեքտոր ստանալ նույնիսկ ներվազուրկ երիկամի վրա (5, 6), միայն ավելի գանդաղ և ավելի դժվար, քան ինտակտ երիկամի վրա: Իսկ երբ ակադ. Սպերանսկու մեթոդով հիպոֆիզի ճագարածե մասի վրա գրվել է ապակյա կիսաօղ, որի հետևանքով խանգարվել է ուղեղի կեղերի և

հիպոֆիզի միջև եղած ներվային կապը, ապա ներվագրկված երիկամի վրա պայմանական ռեֆլեքս բոլորովին շի ստացվել, մինչդեռ ինտակտ երիկամի վրա այն ստացվել է (9):

Ըստհանրապես ներվագրկված երիկամը դառնում է ավելի քիչ ձկուն և ավելի գեղար է փոփոխում իր գործունեությունը, փոփոխված պայման ներին հարմարվելու համար:

Այս տվյալների հիման վրա ակագեմիկոս Բիկովը գալիս է այն եզրակացության, որ երիկամի գործունեությունը գլխուղեղի կեղեկի կողմից կանոնավորվում է երկու ճանապարհով.

1. Ներվային՝ որն սկսվում է ուղեղի կեղեղից, անցնում ողնուղեղը, իսկ այնտեղից վեգետատիվ ներվային ճանապարհով մինչև երիկամը:

2. Նեյրո-հումորալ՝ այս գեղագում գլխուղեղի կեղեկի իմպուլսները հասնում են հիպոֆիզին, փոփոխում նրա գործունեությունը. վերջինս հումորալ ճանապարհով ազդում է երիկամի գործունեության վրա (8):

Բիկովի կարծիքով գլխուղեղի կեղեկի կողմից ներվային ճանապարհով գլխավորապես կանոնավորվում է երիկամների Փիլտրացիոն ֆունկցիան (արյան հոսանքի ուժը երիկամներում փոփոխելու միջոցով), իսկ նեյրո-հումորալ ճանապարհով՝ հիպոֆիզի միջոցով կանոնավորվում են երիկամներում կատարվող ռեաբսորբցիոն պրոցեսները:

Օրեկու և Բիկովի լաբորատորիաներում կատարված այդ աշխատանքները նվիրված են այն խնդրին, թե ինչ ճանապարհներով է իրականացվում գլխուղեղի կեղեկի ազդեցությունը երիկամների ֆունկցիայի վրա:

Մինչև հիմա չի ուսումնասիրվել ցավի ազդեցության տակ երիկամներում առաջացող Փիլտրացիոն և ռեաբսորբցիոն պրոցեսների փոփոխման բնույթը և գլխուղեղի կեղեկի մասնակցելու չափը այդ պրոցեսներում: Բուլորովին չի ուսումնասիրված նաև ներքին արգելակման ազդեցությունը վերոհիշյալ երկու պրոցեսների վրա պայմանական ցավային գրգիռի գեղագում:

Պայմանական ռեֆլեկտոր եղանակով ուսումնասիրելով մի շարք նյութերի արտազատման պրոցեսը երիկամների կողմից, Բունյաթյանը և իր աշխատակիցները վերջին տարիներս ցույց տվին, որ ցավը և պայմանական ցավային գրգիռը խոշոր փոփոխություններ են առաջացնում մի շարք նյութերի արտազատման պրոցեսների մեջ: Այդ գեղագում, բացի այն, որ խիստ իջնում է դիրուեղը (վերջին երկույթը ցույց է տրված և ուրիշների կողմից), փոքրանում է նաև փոսֆատների, քլորիդների, ամիակի և միզանյութի քանակը մեջ, իսկ ասկորբինաթթվի և նիկոտինաթթվի քանակը խիստ մեծանում է: Ստացված տվյալները խոսում են այն մասին, որ երիկամի փունկցիայի մեջ տարրեր նյութերի արտազատման կապակցությամբ տեղի են ունենում ոչ նման փոփոխություններ, և որ ցավի ազդեցության տակ կարճատեն արգելակմում է Փիլտրացիոն պրոցեսը:

Նյութերի արտազատումը երիկամների միջոցով պայմանավորված է Փիլտրացիոն, ռեաբսորբցիոն և սելիկետոր պրոցեսներով: Ստացված աըվացարեքներու համար անհրաժեշտ էր ուսումնասիրել երիկամների վերոհիշյալ ֆունկցիաների փոփոխությունը ցավային և պայմանական ցավային գրգիռների ազդեցության տակ և պարզել, թե այդ յուրաքանչյուր պրոցեսում ինչ չափով է մասնակցում գլխուղեղի կեղեղը:

Բունյաթյանի հանձնարարությամբ մենք ներկա աշխատանքի ընթացքում զրադիլ ենք երիկամի ֆիլտրացիոն և ռեարսորբից ուն պրոցեսների փոփոխության ուսումնասիրությամբ—ցավի, պայմանական ցավային դրգիսի ազդեցության տակ, ինչպես և ուսումնասիրել ենք ներքին արգելակման ազդեցությունը վերոնիշյալ պրոցեսների վրա: Վերջինս մեծ հետաքրքրություն է ներկայացնում, նկատի ունենալով, որ ներքին արգելակումը բիոդիֆական հակայական նշանակություն ունի, որի ազդեցությունը նյութերի փոխանակության վրա քիչ է ուսումնասիրված: Այդ հետաքրքրություն է ներկայացնում նաև այն տեսակետից, որ ինչպես ցույց են տվել մեր լարորատորիայում կատարված այլ աշխատանքները, ներքին արգելակման ժամանակ անպայմանական գրգռիչ-ինսուլինի դեպքում ածխաջրատների փոխանակությունը հակառակ ուղղությամբ է ընթանում:

ԷՔՍՊԵՐԻՄԵՆՏԱԼ ՄԱՍ

Փորձերը դրվել են շների վրա (իդական սեռի), որոնց միզածորանները մեկուսացված են եղել Պավլով-Օրբելու մեթոդով:

Փորձն սկսելուց կես ժամ առաջ կենդանիներին տրվել է 250 սմ³ կաթ և 250 սմ³ ջուր, իրար հետ խառնած: Փորձի սկզբին ներերակային ճանապարհով (v. jugularis externa) ներարկվել է 6 գ գլյուկոզ և 1,5 գ նատրիումի հիպոսուլֆիտ ($\text{Na}_2\text{S}_2\text{O}_8$) լուծված 20 սմ³ թորած ջրի մեջ, ապա 6 գ գլյուկոզա լուծված 20 սմ³ թորած ջրի մեջ, նույն ձևով ներարկվել է նաև փորձի սկզբից 20 և 40 րոպե հետո: Ֆիլտրացիոյի և գլյուկոզայի սեարսորբցիայի աստիճանը որոշելու նպատակով շների արտաքին լժային երակից վերցրել ենք 7 սմ³ արյուն փորձի սկզբից 20 (1-ին նմուշ), 26 (2-րդ նմուշ), 40 (3-րդ նմուշ) և 60 (4-րդ նմուշ) րոպե հետո, ամեն անգամ գլյուկոզայի լուծույթը սրսկելուց առաջ, Մեզի մեջ գլյուկոզայի և հիպոսուլֆիտի քանակությունը որոշելու նպատակով վերցրել ենք նմուշներ փորձի սկզբից 17—20 (1-ին նմուշ), 23—26 (2-րդ նմուշ), 37—40 (3-րդ նմուշ) և 57—60 (4-րդ նմուշ) րոպե հետո:

Յավային զրգիսը տրվել է փորձի սկզբից հաշված 23-րդ րոպեին, կենդանիների աջ հետաքանակ ծայրանդամի միջին $1\frac{1}{3}$ -ի վրա, 15 և էլեկտրական հոսանքով, 30 վայրկյան անողությամբ:

Մեզի և արյան մեջ հիպոսուլֆիտի քանակությունը որոշվել է Գիլման-Ֆիլիպ-Կոլեբի եղանակով (11), իսկ գլյուկոզայի քանակությունը նելսոնի եղանակով (12):

Սկզբնական շրջանում, այդ ուղղությամբ դրվել են կոնտրոլ փորձեր³, կենդանիների մոտ եղած նորմալ պատիերը որոշելու նպատակով: Այս տվյալները ելակեա են ծառայել կենդանիների վրա հետագայում կատարված որոշ ներգործություններից հետո ստացված տվյալների հետ համեմա-

¹ Նատրիումուլֆիտը, ինչպես ցույց են տվել մի շարք աշխատանքներ, կրեատինինի նման չի ենթարկվում սեարսորբցիայի և նրա քանակական որոշումը արյան ու մեզի մեջ զարգացնա է տակա ֆիլտրացիոն պրոցեսի ինտենսիվության մասին: Այդ պատճառով կրեատինինի փոխարեն մենք օգտագործել ենք նատրիումի հիպոսուլֆիտը, որի քանակական որոշումը կրեատինինի հետ համեմատած, ունի մի շարք առավելություններ:

² Ինչպես ցույց են տվել մեր մի շարք փորձերը, հիպոսուլֆիտի ներկայությունը արյան և մեզի մեջ չէր խանգարում այդ եղանակով գլյուկոզայի քանակական որոշմանը:

³ Բոլոր փորձերը զրվել են ջրի և գլյուկոզայի ծանրաբեռնումով (հարցուկ):

տեղու համար: Դրանից հետո սկսել ենք զրադվել կենդանիների մոտ պայմանական ռեֆլեքսների մշակումով: Իրբե անպայմանական գրգիռ օգտագործել ենք՝ թույլ էլեկտրական հոսանքով առաջացրած ցավը, իսկ իրք պայմանական գրգուիչ՝ էլեկտրական զանգի ձայնը, որը տրվել է անպայմանական գրգիռից 10 վայրկյան առաջ և ուղեկցել նրան մինչև նրա վերջը:

Այս ձեռվ յուրաքանչյուր շան վրա դրվել է 4—6 փորձ, նպատակ ունենալով մի կողմից պարզել ցավի ազդեցությունը երիկամի ֆունկցիայի վրա, կազմական նրա դիուրետիկ ֆիլտրացիոն և ռեարուրբացիոն հատկությունների հետ, մյուս կողմից կենդանիների մոտ առաջացնելու զանգի ձայնի հետ կազմական պայմանական ռեֆլեքս ցավի նկատմամբ:

Մեր փորձերին ենթակա շների մոտ զանգի ձայնը (պայմանական գրգուիչ) միայն 4—6 անգամ ցավի հետ (անպայմանական գրգուիչ) գուգակցելուց հետո առաջացնում էր այն արտաքին պատճերը, որը նկատվում էր կենդանիների մոտ ցավ առաջացնելու գեղաքում: Զանգի ձայնը լսելիս նրանք կատարում էին անհանդիստ շարժութեանը, ունում, փորձում էին սեղանից ցաւսկել և այլն: Նրանք դժվարությամբ էին դալիս էքսպերիմենտալ սենյակը և նախքան զանգի հնչեցնելը առաջին 20 րոպեի դիուրեզը ավելի քիչ էր լինում կոնտրոլ փորձերի համեմատությամբ:

Այս երկությունները ցույց էին տալիս, որ կենդանիների մոտ արգելաստեղծվել է ցավի նկատմամբ էլեկտրական զանգի ձայնի հետ կազմական պայմանական ռեֆլեքս (պայմանական պաշտպանողական ռեֆլեքս): Դրանից հետո մենք սւսումնասիրեցինք միայն պայմանական գրգուիչի ազդեցությունը երիկամի ֆունկցիայի վրա:

Պայմանական գրգուիչի ազդեցությունը երիկամների ֆունկցիայի վրա ուղարկելուց հետո, մենք անցանք մեր աշխատանքի հաջորդ էտապին, այն է՝ պայմանական ռեֆլեքսների արգելակմանը, ընդ որում ընտրեցինք մարման մեթոդը, որը ներքին արգելակման մեմբրից մեկն է:

Գետք է ասել, որ այս ձեռվ արգելակումն ստացվում էր շատ գեվար և դանդաղ: Նույնիսկ 8—9 փորձից հետո (սրոնց ընթացքում պայմանական գրգուիչը չէր ամրապնդվում անպայմանական գրգուիչով), որոշ կենդանիների մոտ (ինչպես, օրինակ «Չալիկ» շան մոտ) արգելակում չէր նկատվում: Այս երկությը գուցե պետք է բացատրել նրանով, որ առնասարակ պայմանական պաշտպանողական ռեֆլեքսը առաջացում է առաջաւ կողմից նրանով, որ մեզ մոտ փորձերը դրվում էին մեծ ընդմիջումով (72 ժամ): Նկատի ունենալով այդ, մենք դիմեցինք այլ մեթոդների, սրոնք արագացրինք «Չալիկ» և «Չամբար» շների վրա արգելակում ստանալ միենույն փորձի ընթացքում, ինչպես այդ կատարում էր ի. Պ. Պավլովը թքակեղձի վրա աշխատելու ժամանակ. այսինքն, պայմանական ռեֆլեքսը մարում էինք մեկ ժամվա ընթացքում: Ցավ պատճառելուց հետո զանգը (պայմանական գրգուիչը) կրկնում էինք առանց անպայմանական գրգուիչով ամրապնդելու, յուրաքանչյուր երեք րոպեն մեկ անգամ, մինչև փորձի վերջը:

Այս եղանակը է. չ. Հասրաթյանի փորձերում ավել է արտահայտված արգելակում (13):

Այս ձեռվ վարպելիս շունը փորձի վերջում պայմանական գրգուիչի նկատմամբ արգելն սեակցիա չէր ցուցաբերում, իսկ արյան և մեզի լարո-

բատոր քննությունից ստացված տվյալները, ինչպես և շան վարքը, փոփոխվում էին հակասակ ուղղությամբ (ցավի ազդեցության տակ ստացված տվյալների համեմատությամբ) և ցույց էին տալիս արգելակման առկայությունը (շունը թեթև նիրհում էր, հանգիստ և թուլացած վիճակում էր լինում):

Բացի այդ, ռՅորիկա շան վրա փորձեցինք ստանալ պայմանական արգելակում: Դրա համար կենդանուն մի օր պայմանական գրգորիչի հետ միասին պատճառել ենք ցավ, իսկ մյուս օրը մինչև պայմանական գրգորիչի տալը երկու բոպե տեղությամբ, շան ուշադրությունը գրավել ենք մի կողմանակի ագենտով, ավյալ գեպքում նրա առաջ հարմարեցրել ենք պտըտվող և թեթև ձայն արձակող (զանգի ձայնից տարբերվող) առարկա, որին անմիջապես զուգակցվել է պայմանական գրգորիչը, առանց ցավով ամրապնդելու: Այս ձևով ստացվեց ցուցադրական արգելակում, ըստ որում տըլյալները խիստ տարբերվում էին ցավի կամ պայմանական գրգորիչի աղդեցության տակ հատցվող տվյալներից:

Ցուրաքանչյուր շան վրա, ընդհանուր առմամբ, կատարվել է 36—48 փորձ, որոնցից աեցստում խոսվում է միայն մի քանիսի մասին: Առանձին շների վրա գիուրեղի փոփոխության վերաբերյալ ստացված տվյալները աեղագորքած են 1, 2 և 3 նկարներում, ֆիլտրացիայի վերաբերյալ՝ 4, 5, 6 նկարներում և գլյուկոզայի սեաբսորբցիայի վերաբերյալ՝ 1, 2 և 3 աղյուսակիներում:

Կոնարոլ փորձերի ընթացքում ստացված տվյալները ընդհանրապես ցույց են տալիս, որ գիուրեղը խիստ փոփոխություն չի կրում, աստիճանաբար իջնում և տատանվում է որոշ սահմաններում: Ֆիլտրացիան նույնպես աստիճանաբար իջնում է մինչև փորձի վերջը, սակայն այդ իջնումը կատարվում է ոչ միանգամբից, այլ աստիճանաբար:

Այս փորձերի ընթացքում գլյուկոզայով ծանրաբեններուց հետո շների մոտ նկատվում է գլյուկոզայի չափավոր արտազատում մեղի միջոցով: Տարբեր ժամանակներում վերցրած նմուշների մեջ այն արտազատվում է տարբեր քանակներով և ամենից շատ հատկապես 2-րդ նմուշում:

Այսան մեջ գլյուկոզայի քանակությունը մեծ տատանումներ ցույց չի տալիս, ավելի բարձր է 2-րդ նմուշում (26 բոպե). շնորհիվ այն բանի, որ արյան 2-րդ նմուշը վերցվում էր մեր կողմից գլյուկոզայի ներարկումից 6' իսկ մնացած գեղքերում 20 բոպե հետո,


Քննարկենք ստացված տվյալները, յուրաքանչյուր շան նկատմամբ առանձին-առանձին:

«Բորբիկ» շան մոտ—կոնարոլ փորձում¹ (նկ. 1) մեղի քանակությունը ասածին նմուշում 2 սմ³ էր, 2-րդ նմուշում՝ 3 սմ³, 3-րդ նմուշում՝ 2 սմ³ և 4-րդ նմուշում՝ 2 սմ³: Ինչպես երևում է բերված տվյալներից, կոնարոլ փորձի ընթացքում գիուրեղը մեծ փափոխությունների չի հնթարկվում:

Պաշտպանողական ռեֆլեքսի ազդեցության տակ դիուրեղը խիստ իջնում էր, ցավը պատճառելու մոմենտից սկսած միզածորաններից թափվող

¹ Այս ինչպես և մյուս գեղքերում մի շաբթ համանման փորձերի տվյալներից բերվում է միայն մեկը:

կաթիլների քանակը խիստ պակասում էր: Դիուրեզը երբեմն հասնում էր շավին նախորդող նմուշի $\frac{1}{5}$ չափին: «Բորիկ» շան մոտ ցավին նախորդող նմուշում դիուրեզը 2,5 սմ³ էր, ցավից անմիջապես հետո դառնում էր 1 սմ³, իսկ 40 րոպե հետո հասնում էր մինչև 0,5 սմ³, հետո աստիճանաբար բարձրանում:



Նկ. 1

Պայմանական-պաշտպանողական ռեֆլեքսի ազդեցությունը երիկամի գործունեության վրա արտահայտվում էր նույն երեւյթներով, ինչ որ ցավի դեպքում, միայն թե դիուրեզը ավելի մեղմ չափով էր իջնում:

Այս շան մոտ ցավի պայմանական գրգռիչին նախորդող շրջանում դիուրեզը 2 սմ³ էր, զանգը հնչեցնելուց հետո իջնում էր 1,5 սմ³, հետո բարձրանում էր 2 սմ³ և մնում այդ մակարդակի վրա մինչև փորձի վերջը:


Արգելակման ֆազան արժատապես տարբերվում էր գրգռման ֆազայից: Այս տարբերությունն արտահայտվում էր ինչպես կենդանու վարքի (հանդիսա, անշարժ, երբեմն նիրնուն վիճակ), այնպես էլ արյան ու մեղի լարորատոր քննություններից ստացված տվյալների մեջ: Այս ֆազայում նկատվում էր բոլոր ցուցանիշների բարձրացում: Բոլոր նմուշներում զգալի չափով բարձրանում էր դիուրեզը, երբեմն փորձի վերջում մի քանի տասնամ ավելի շատ մեղ էր արտազատվում, քան փորձի սկզբում: Այսպես, օրինակ, «Բորիկ» շան մոտ այս փորձում առաջին նմուշում դիուրեզը 2 սմ³ էր, 2-րդ նմուշում՝ 5 սմ³, 3-րդ նմուշը՝ 4 սմ³, 4-րդ նմուշում՝ 8 սմ³:

«Զալիկ» շան մոտ կռնարու փորձի (նկ. 2) ընթացքում դիուրեզը տարբեր ժամանակամիջոցներում ուներ հետևյալ պատկերը՝ 1-ին նմուշը՝ 2 սմ³, 2-րդ նմուշը՝ 5 սմ³, 3-րդ նմուշը՝ 4 սմ³, 4-րդ նմուշը՝ 3 սմ³,

Պաշտպանողական ռեֆլեքսի ազդեցության տակ դիուրեզը խիստ իջ-

նում էր և ուներ հետեւյալ՝ պատկերը՝ նախքան ցավը 6 սմ³ էր, նրանից անմիջապես հետո 2 սմ³, 3-րդ նմուշում՝ 2 սմ³ և 4-րդ նմուշում՝ 3 սմ³.

Պայմանական-պաշտպանողական սեփեքսի ազդեցության տակ նկատվում էր նույն ձևով գիտուրեզի իջեցում, ինչպես ցավի ազդեցության տակ Այսպես, այս նույն շան մոտ պայմանական ցավային գրգռիչը տալուց առաջ դիուրեզը 3 սմ³ էր, նրանից հետո (պայմանական ցավային գրգռիչը տալուց հետո) 1 սմ³, 3-րդ նմուշում՝ 2 սմ³ և փորձի վերջում՝ 3 սմ³.




Նկ. 2

Արգելակման շրջանում այս շան մոտ ես, ինչպես և նախորդ շան մոտ, նկատվում էր դիուրեզի բարձրացում. այսպես՝ առաջին նմուշում մեզը 4 սմ³ էր, 2-րդ նմուշում՝ 4 սմ³, 3-րդ նմուշում՝ 6 սմ³ և 4-րդ նմուշում՝ 12 սմ³.

Ինչպես երեսում է ավյաներից, դիուրեզը այս շան մոտ արգելակման շրջանում բարձրանում է զգալի չափով. նշենք, որ այս շան մոտ արգելակում ստացվում էր ավելի լավ, քան մյուսների մոտ և դրան համապա-

տասխան մեզի քանակությունն արգելակման շրջանում մյուսների նկատմամբ ավելի շատ էր բարձրանում:

Չամբարը շան վրա ստացված (նկ. 3) տվյալները նման են նախորդ շնչրի վրա գրված փորձերից ստացված տվյալներին. Կոնտրոլ փորձերում ունենք հետեւյալ պատկերը. 1-ին նմուշը՝ 6 սմ³, 2-րդ նմուշը՝ 8 սմ³, 3-րդ նմուշը՝ 5 սմ³ և 4-րդ նմուշը՝ 6 սմ³. Պաշտպանողական ռեֆլեքսի ազդեցությունն տակ այս շան մոտ տեղի ունեցող դիուրեզի փոփոխությունն ունի հետեւյալ պատկերը՝ 1-ին նմուշը՝ 3 սմ³, ցավից անմիջապես հետո (2-րդ նմուշը) 1,5 սմ³, 3-րդ նմուշը՝ 1,5 սմ³ և 4-րդ նմուշը՝ 2 սմ³:



Նկ. 3


Պայմանական-պաշտպանողական՝ ռեֆլեքսի ազդեցության տակ դիուրեզի իջնեցումը խիստ ցայտուն է: 1-ին նմուշում, որը նախորդում է այդ դրդիուին (պայմանական-ցավլային) մեջի քանակը 10 սմ³ էր, այդ գրդիսից հետո՝ 4 սմ³, 3-րդ նմուշում՝ 5 սմ³ և 4-րդ նմուշում՝ 3 սմ³.

Արգելակման շրջանում դիուրեզի փոփոխությունն ունի հակառակ պատկերը, այսպես՝ 1-ին նմուշում՝ 3 սմ³, 2-րդ նմուշում՝ 2 սմ³, 3-րդ նմուշում՝ 6 սմ³ և 4-րդ նմուշում՝ 8 սմ³:

Ընդհանրացնելով դիուրեզի վերաբերյալ եղած տվյալները, կարելի է տաել որ ցավի ազդեցության տակ փորձնական կենտրոնների մոտ խիստ իջնում է դիուրեզը, որը մինչև փորձի վերջը, այսինքն ցավից հետո 40 րոպեի ընթացքում սկսում է առաճանարար բարձրանալ, բայց հաճախ չի հասնում ցավից առաջ եղած մեծությանը. Պայմանական-ցավլային դրսդիուր դիուրեզի նկատմամբ առաջացնում է նույն փոփոխությունները

ինչ որ ցավը: Արգելակման շրջանում մեղի քանակն սկսում է ավելանալ. երբեմն այդ ավելացումը հասնում է զգալի չափերի և 2—4 անգամ գերազանցում սկզբնական մեծությանը:

Ցավը (պաշտպանողական ռեֆլեքս) խիստ ազդում է նաև երիկամի ֆիլտրացիոն հատկության վրա: Երա ազդեցության տակ ֆիլտրացիան իջնում է, որոշ գեղքերում այդ խիստ է արտահայտվում, համեմով ցավին նախորդող շրջանի ֆիլտրացիայի $\frac{1}{3}$ — $\frac{1}{4}$ -ին: Այս իջեցումը կատարվում է միանգամից, շատ կարճ ժամանակամիջոցում: Ցավից որոշ ժամանականց ֆիլտրացիան սկսում է՝ բարձրանալ և նրանից 17 րոպե հետո նրա



Նկ. 4


արագությունը զգալիորեն աճում է, չհասնելով, սակայն, այն մեծությանը, որ գոյություն ուներ նախքան ցավը: Ապա ֆիլտրացիոն պրոցեսը նորից սկսում է իջնել և փորձի վերջում ավելի ցածր է լինում, քան նրան նախորդող շրջանում:

«Բորիկ» շան մոտ կոնտրոլ փորձում, ինչպես ցույց է տալիս նկ. 4, համապատասխան կորածի տարրեր նմուշներում ֆիլտրացիան արտահայտվում էր հետեւյալ մեծություններով: 1-ին նմուշում՝ 52 սմ³, 2-րդ նմուշում՝ 61 սմ³, 3-րդ նմուշում՝ 56 սմ³ և 4-րդ նմուշում՝ 32 սմ³ մեկ րատեսում:

Պաշտպանողական ռեֆլեքսի ազդեցության տակ ֆիլտրացիայի փոփոխությունն ուներ հետեւյալ պատկերը: 1-ին նմուշում՝ 71 սմ³ (ցավին

նախորդող շրջան), 2-րդ նմուշում՝ 17 սմ³ (ցավին անմիջապես հաջորդող շրջան), 3-րդ նմուշում՝ 42 սմ³ (ցավից 17 րոպե հետո) և 4-րդ նմուշում՝ 39 սմ³ (ցավից 37 րոպե հետո):

Պայմանական-պաշտպանողական ռեֆլեքսի ազդեցության տակ այս շան մոտ ֆիլտրացիան կը ունի գոփոխությունները, ինչ որ ցավի ազդեցության տակ այսպիս, օրինակ՝ ցավի պայմանական գրգիռին նախորդող շրջանում այն 53 սմ³ էր, նրանից անմիջապես հետո 22 սմ³, ապա դուրս մինչև 41 սմ³ (3-րդ նմուշ) և փորձի վերջում իջնում էր 18 սմ³-ի (4-րդ նմուշ):




Նկ. 5

Արգելակման շրջանում դիուրեզի հետ միտաին ուժեղանում է: Նաև երիկամի ֆիլտրացիոն հատկությունը, կոնտրոլ փորձերից և ցավի ազդեցության տակ ստացված տվյալներից երեսում է, որ փորձի սկզբից սկսած մինչև վերջը ֆիլտրացիան աստիճանաբար թուլանում է, իսկ արգելակման շրջանում, ընդհակառակը, թեթև տատանութերից հետո ուժեղանում, մինչև փորձի վերջը և վերջին նմուշում զգալի չափով ավելի մեծանում է, քան առաջին նմուշում: «Բարիկ» շան մոտ արգելակման շրջանում (պայմանական արգելակման մեթոդով), ֆիլտրացիան առաջին նմուշում 47 սմ³ էր, 2-րդ նմուշում՝ 47 սմ³, 3-րդ նմուշում՝ 49 սմ³ և 4-րդ նմուշում՝ 73 սմ³:

«Զալիկ» շան մոտ ֆիլտրացիայի փոփոխության պատճերը հետեւյան էր (նկ. 5), կոնտրոլ փորձում 1-ին նմուշում՝ 69 սմ³, 2-րդ նմուշում՝ 73 սմ³:

3-րդ նմուշում՝ 56 սմ³ և 4-րդ նմուշում՝ 44 սմ³: Պաշտպանողական ռեֆլեքսի ազդեցության տակ ֆիլտրացիան խիստ փոփոխվում էր և ուներ հետեւյալ պատկերը՝ 1-ին նմուշում՝ 102 սմ³, 2-րդ նմուշում՝ 45 սմ³, 3-րդ նմուշում՝ 46 սմ³ և 4-րդ նմուշում՝ 41 սմ³: Պայմանական-պաշտպանողական ռեֆլեքսի ազդեցության տակ ֆիլտրացիան փոփոխվում էր հետեւյալ կերպ. 1-ին նմուշում՝ 76 սմ³, 2-րդ նմուշում՝ 48 սմ³, 3-րդ նմուշում՝ 44 սմ³ և 4-րդ նմուշում՝ 46 սմ³:



Արգելակման ֆազայում (մարման եղանակով) ֆիլտրացիան այս շան մոտ խիստ ուժեղանում էր, և ինչպես երեսում է 5-րդ նկարից, սկզբնական շրջանում այն 61 սմ³ էր, ցավից հետո 58 սմ³ և հետագայում պայմանական ռեֆլեքսի մարմանը զուգընթաց ֆիլտրացիան ուժեղանում էր, հասնելով 63 սմ³-ի (3-րդ նմուշ) և 90 սմ³-ի (4-րդ նմուշ):

«Չամբար» շան մոտ (նկ. 6) ֆիլտրացիայի փոփոխությունը կոնտրոլ փորձերում ցավի, պայմանական ցավային գրգիռի ազդեցության տակ և արգելակման ֆազայի ընթացքում արտահայտվում էր համարյա նույն ձևով, ինչպես այն տեղի ուներ «Բորիկ» և «Չամբար» շների մոտ:

Ֆիլտրացիայի վերաբերյալ ստացված տվյալները ցույց են տալիս, որ պաշտպանողական ռեֆլեքսը, ինչպես վերը տեսանք, իջեցնելով գիռուբեզր, իջեցնում է նաև երիկամների ֆիլտրացիոն հատկությունը, որը հա-

Սառըի բեկում և նր այդ շան վրա կատարված փորձերից ստացված ավշաները

	1-ին նմուշ	2-րդ նմուշ	3-րդ նմուշ	4-րդ նմուշ
Կօնտրոլ փորձ	50	51	43	28
Պաշտպանողական սեփլեքս	96	28	33	52
Պայմանական-պաշտպանողական սեփլեքս	54	23	45	35
Արգելակման ֆազա (ժարման եղանակով)	43	43	50	50

ճախ համառմ է մեծ չափերի: Պայմանական-պաշտպանողական սեփլեքսը երիկամի ֆիլտրացիոն հատկության վրա ունի նույն ազդեցությունը, ինչ յավը, ներքին արգելակման ֆազայում երիկամների ֆիլտրացիան բարձրանում է և հաճախ զգալի չափով գերազանցում է յավին նախորդող շրջանի մեծությանը:

Այժմ անցնենք երիկամների պաշտպանողական, պայմանական-պաշտպանողական սեփլեքսների և ներքին արգելակման ազդեցության տակ տեղի ունեցող սերպորցիոն ֆունկցիայի փոփոխության ուսումնասիրությանը:

Կօնտրոլ փորձերի ընթացքում բոլոր շների վրա ընդհանուր առմամբ նկատվում է, որ երկրորդ նմուշում ֆիլտրված և հետներծված գլյուկոզայի քանակությունը զգալիորեն բարձր է մնացած նմուշների համեմատությամբ: Այդ տարրերությունը երբեմն շատ մեծ է, ինչպես «Բորիկ» շան մոտ (աղյուսակ 1): 1-ին նմուշում մեկ բովենում ֆիլտրվել է 42 մգ, որից ներծծվել է 41 մգ, 2-րդ նմուշում նույնքան ժամանակի ընթացքում ֆիլտրվել է 156 մգ և որից հետներծվել է 141 մգ:

Նույն երեսույթը, լմիայն տարրեր չափով, նկատվում է և մնացած շների մոտ («Զալիկ», «Զամրար»): Այս աղյալները ցույց են տալիս, որ երիկամները կարող են առաջնային մեղից մեծ քանակով գլյուկոզա հետներծել և պահպանել այն օրգանիզմի կարիքների համար:

Պաշտպանողական սեփլեքսի ազդեցության տակ լուրուրեզի և ֆիլտրացիայի նման փոփոխվում է նաև զյուկոզայի սերպորցիան: Քանի որ ցավի ազդեցության տակ իջնում է երիկամի ֆիլտրացիոն հատկությունը, ապա բնական է, որ նրա հետ իջնում է և ֆիլտրվող նյութերի քանակությունը:

1-ին աղյուսակի տվյալներից երեսում է, որ պաշտպանողական սեփլեքսին նախորդող շրջանում երիկամի կծիկներում մեկ բովեն ընթացքում ֆիլտրվում է ավելի շատ գլյուկոզա, քան նրանից անմիջապես հետո (նույն ժամանակամիջոցում): Պաշտպանողական սեփլեքսի ազդեցության տակ իջնում է նաև երիկամի սերպորցիոն հատկությունը: Զնայած նրան, որ ցավի ազդեցության տակ ֆիլտրվող գլյուկոզայի քանակը խիստ իջնում է (երբեմն մի քանի անգամ ցավին նախորդող շրջանի համեմատությամբ), այնուամենայնիվ այդ քիչ քանակով ֆիլտրված զյուկոզան լրիվ հետ չի ներծծվում, այսինքն խանգարվում է նաև նրա հետներծծման պրոցեսը: Այսպես, օրինակ, «Բորիկ» շան մոտ (աղյուսակ 1) ցավին նախորդող շրջանում մեկ բովենում ֆիլտրվել է 90,8 մգ գլյուկոզա, որը համարյա թե լրիվ հետներծվել է արյան մեջ, իսկ ցավի ազդեցության տակ ֆիլտրվել է 24 մգ գլյուկոզա, որից սակայն, հետներծվել է միայն 20 մգ:

Պղյուսակ 1
Գլխակողայի սեպասորբցիայի փոփոխությունը երիկամներում

	Կոնտրոլ	Պաշտպանողական		Պայմանական-պաշտպանողական	
		1-ին փորձ	2-րդ	1-ին փորձ	2-րդ
«Բարիկ» 1-ին նմուշ		42 ¹ 41	24 19	90,8 90,3	66 66
2-րդ նմուշ		156 141	10% 80	24 20	25 20
3-րդ նմուշ		34 28	33 28	48 46	66 63
4-րդ նմուշ		47 44	30 25	69 68	39,7 38,8
«Զալիկ» 1-ին նմուշ		75 74	90 89	129 124	142 141
2-րդ նմուշ		155 149	197 186	103 88	89 81
